ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
(1875—1974)

1974 թվականի հոկտեմբերի 24-ին Թբիլիսիի իր բնակարանում վախճանվեց տ. Մելքիսեդեկ քհն. Մելքոնյանը:

Հանգուցյալը ծնվել է 1875 թվականին Ղուկասյանի շրջանի Հարթաշեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Ալեքսանդրապոլի ծխական դպրոցում:

1885—1888 թվականներին սովորել է Թբիլիսիի Ներսիսյան հոգևոր դպրոցում:

1924 թվականին քահանա է ձեռնադրվել Լենինականի ս. Նշան եկեղեցում՝ Շիրակի թեմի առաջնորդ տ. Աշոտ արքեպ. Շախյանի ձեռքով, Հարթաշեն գյուղի ս. Աստվածածին եկեղեցու վրա:

1940 թվականին տեղափոխվել է Թբիլիսի և մինչև 1947-ը քահանայագործել Վրաստանի Դումանիսի շրջանի Գորինջուկ գյուղի ս. Աստվածածին հայկական եկեղեցում:

1947—1968 թվականներին քահանայագործել է Թբիլիսիի ս. Էջմիածին եկեղեցում:

1968 թվականից հանգստյան է կոչվել, իր առաջացած տարիքի պատճառով:

Հանգուցյալը 1968 թվականին, իր բարվոք և անբասիր ծառայության համար, պարգևատրվել է Վեհափառ Հայրապետի կողմից քահանայական լանջախաչով:

Հոկտեմբերի 27-ին, կիրակի օրը, ս. Էջմիածին եկեղեցում կատարվում է հանգուցյալ տ. Մելքիսեդեկ քահանայի վերջին օծման կարգը՝ ձեռամբ վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի:

Այնուհետև իր դամբանական խոսքում տ. Գևորգ սրբազանը վեր է հանում հանգուցյալի արժանիքները՝ որպես հավատավոր ու պարտաճանաչ հոգևորականի:

Հանգուցյալ տ. Մելքիսեդեկ քհն. Մելքոնյանի աճյունը, տ. Գևորգ եպիսկոպոսի հանդիսադրությամբ, ամփոփվում է Պետրե-Պավլե գերեզմանատանը:

Հանգիստ իր ոսկորներին: